Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 29-06-2022 թ. որոշմամբ
«ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ 30/3 ԳՐ. 129
1.3 Պետական գրանցման համարը		286.160.04439
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2002-01-10
1.5 ՀՎՀՀ-ն		02560496
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)99444442
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		corpgov.am
1.8 Էլեկտրոնային փոստը		corpgov@corpgov.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Տիգրան Կարապետյան		
Աշոտ Եղիազարյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Տիգրան Կարապետյան		
Գևորգ Պողոսյան		
Արթուր Խեբոյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Նարինե Մելիքյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կորպորատիվ կառավարման և կորպորատիվ իրավունքի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում	2,450,000

VARDANYAN HAKOB 2703860013

Digitally signed by VARDANYAN HAKOB 2703860013
Date:

	Վարձակալությամբ տրված ավտոմեքենայի վարձավճար	1,320,000
	Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգի վերլուծություն	300,000
	«ՀԱՅԱՍՏԱՆ. ԿԱՆԱՅՔ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ» ծրագիր	8,107,006
	«Հայաստան. հզորացնել մասնավոր հատվածին ժողովրդավարական անցմանն աջակցելու համար» ծրագիր	14,816,555
	ԵՎՐԱՍԻԱ. ՁԵՎԱՎՈՐԵԼ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐ, 2-ՐԴ ՓՈՒԼ	4,802,200
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	նվիրաբերություն	7,300,000
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
«Հայաստան. հզորացնել մասնավոր հատվածին ժողովրդավարական անցմանն աջակցելու համար» ծրագիր	17,521,776	
ՀԱՅԱՍՏԱՆ. ԿԱՆԱՅՔ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ	10,942,181	
ԵՎՐԱՍԻԱ. ՁԵՎԱՎՈՐԵԼ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐ, 2-ՐԴ ՓՈՒԼ	2,885,172	
«ԿԱՆԱՆՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԱՋԱԿՑԵԼ ԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ» ծրագիր	912,250	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	35,759,692	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	32,261,379	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ____17____թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ աուդիտորի եզրակացություն

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
5	Հոգաբարձուների խորհրդի կազմ
6	Ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվի մասին հաշվետվություն
7	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
8	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
9	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հիմնադրամի գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Հիմնադրամ
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Կազմակերպության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Տնօրեն՝	Նարինե Մելիքյան

Հեռ.՝ +37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է *«Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամի ղեկավարությանը*

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվի մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը՝ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* պարբերությունում:

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք),* և պահպանել ենք ՀԷՄՄԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Հիմնադրամը, կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Հեռ.՝ +37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ հարկ, տարածք 7

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հայտնաբերում և գնահատում ենք սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին կամ եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերած նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

27 հունիսի, 2022թ.
«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Հոգաբարձուների խորհրդի կազմ

Տիգրան Կարապետյան

Խորհրդի նախագահ (Հայաստան)

Արթուր Խեբոյան

Խորհրդի անդամ (Հայաստան)

Գևորգ Պողոսյան

Խորհրդի անդամ (Հայաստան)

Ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվի մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2021 հազար դրամ	2020 հազար դրամ
Ծառայությունների մատուցումից հասույթ	4	2,700	5,814
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	5	(1,304)	(5,746)
Համախառն շահույթ		**1,396**	**68**
Վարչական ծախսեր	6	(3,962)	(5,152)
Շնորհից եկամուտ	7	32,262	6,496
Ծրագրային ծախսեր	8	(32,262)	(6,496)
Նվիրատվություններից եկամուտներ		7,300	2,000
Վարձակալությունից եկամուտ		1,440	1,440
Այլ եկամուտ		92	-
Ֆինանսական ակտիվների վերաչափումից օգուտ, զուտ		293	184
Արտարժույթի փոխարժեքային օգուտ/(կորուստ), զուտ		(1,363)	1,096
Տրամադրած նվիրատվություն		-	(200)
Շահույթ/ (վնաս) մինչև հարկումը		**5,196**	**(564)**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	9	(183)	73
Տարվա շահույթ/ (վնաս)		**5,013**	**(491)**
Կուտակված արդյունք տարեսկզբի դրությամբ		15,773	16,264
Կուտակված արդյունք տարեվերջի դրությամբ		**20,786**	**15,773**

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամի ղեկավարության կողմից 2022թ. հունիսի 27-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Նարինե Մելիքյան
Տնօրեն

Հակոբ Վարդանյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2021թ. հազար դրամ	31.12.2020թ. հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	10	5,268	6,560
Ֆինանսական ակտիվներ	11	5,330	5,483
Հետաձգված հարկային ակտիվ		142	77
		10,740	**12,120**
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ	12	12,440	9,028
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13	2,658	1,459
Պաշարներ		91	99
		15,189	**10,586**
Ընդամենը ակտիվներ		**25,929**	**22,706**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ	14	3,600	3,600
Շահութահարկի գծով պարտավորություն	9	248	-
Հարկերի գծով պարտքեր		538	445
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		757	402
Եկամուտներին վերաբերող շնորհներ	15	-	2,486
		5,143	**6,933**
Ընդամենը պարտավորություններ		**5,143**	**6,933**
ԶՈՒՏ ԱԿՏԻՎ			
Կուտակված արդյունք		**20,786**	**15,773**
		20,786	**15,773**

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամի ղեկավարության կողմից 2022թ. հունիսի 27-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Նարինե Մելիքյան
Տնօրեն

Հակոբ Վարդանյան
Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2021 հազար դրամ	2020 հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ծառայությունների մատուցումից մուտքեր	4,370	9,803
Շնորհներից մուտքեր	27,726	9,045
Նվիրատվություններից մուտքեր	7,300	2,000
Նյութական վնասի փոխհատուցումից մուտքեր	92	-
	39,488	**20,848**
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(27,110)	(14,111)
Ծառայությունների և վարձակալության դիմաց վճարումներ	(7,756)	(4,687)
Վճարումներ հարկերի գծով	(567)	(174)
Այլ ելքեր	(82)	(219)
	(35,414)	**(19,191)**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	**4,074**	**1,657**
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	-	900
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսք	-	**900**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**4,074**	**2,557**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	(662)	602
Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ	9,028	5,869
Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ	**12,440**	**9,028**

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են «Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամի ղեկավարության կողմից 2022թ. հունիսի 27-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Նարինե Մելիքյան
Տնօրեն

Հակոբ Վարդանյան
Գլխավոր հաշվապահ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ 10
2 ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ 11
3 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 12
4 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԻՑ ՀԱՍՈՒՑՔ 13
5. ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ 13
6. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ 13
7. ՇՆՈՐՀԻՑ ԵԿԱՄՈՒՏ 13
8. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ 13
9. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ 14
10. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 15
11. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ 16
12. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 16
13. ԱՌԵՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ 16
14. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ 16
15. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ 16
16. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ 17
17. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 17
18. ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ 17

1 Հիմնադրամի մասին

«Կորպորատիվ կառավարման կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) ստեղծվել է 2001թ. դեկտեմբերի 13-ին կնքված «Կորպորատիվ կառավարման կենտրոն հիմնադրամի ստեղծման մասին» պայմանագրով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն:

Հիմնադրամի կանոնադրությունը գրանցվել է 10.01.2002թ. Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, գրանցման համար՝ 286.160.04439, վկայական՝ 03 Ա 052594, ՀՎՀՀ՝ 02560496:

Հիմնադրամի իրավաբանական և գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Գյուլբենկյան 30/3, գրասենյակ 129:

Հիմնադրամի նպատակներն են.

- Հայաստանում կորպորատիվ կառավարման համակարգի ներդրման միջոցով սատարել քաղաքացիական հասարակության կայացմանը, կայուն տնտեսական աճի ապահովմանը և կոռուպցիայի դեմ պայքարին,
- Նպաստել կորպորատիվ կառավարման, կորպորատիվ իրավունքի և կորպորատիվ ֆինանսների տեսական, գիտահետազոտական և գործնական աշխատանքներին՝ դրանց տեսական ու գործնական կիրառումն ապահովելու միջոցով,
- Հայաստանի իշխանություններին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին կորպորատիվ կառավարման համակարգի հաջողակ մոդելի և երկարաժամկետ մեթոդաբանական օգնության տրամադրումը՝ կորպորատիվ կառավարման ոլորտը կարգավորող հայստանյան և արտասահմանյան օրենսդրական դաշտի ուսումնասիրության և ոլորտի զարգացմանն ուղղված առաջարկոիթյունների մշակման և իրավասու անձանց ու մարմինների հաստատմանը, հավանությանը ներկայացնելու, կորպորատիվ կառավարմանն առնչվող հիմնախնդիրներին նվիրված կոնֆերանսների և սեմինարների կազմակերպման և անցկացման միջոցով,
- Աջակցել գիտական և/կամ կրթական կազմակերպություններին և գիտական աստիճան և/կամ պաշտոն ունեցող ֆիզիկական անձանց կորպորատիվ կառավարման, ֆինանսների, կապիտալի և ընդհանրապես ֆինանսական շուկաների և դրանցում գործող տեխնոլոգիաների, կառուցակարգերի և միջազգային զարգացումների բնագավառի գիտելիքների տարածման, ուսուցման և լուսաբանման աշխատանքներում (ներառյալ համատեղ կամ միակողմանի դասընթացների, սեմինարների, կոնֆերանսների կազմակերպման, գիտահետազոտական աշխատանքների իրականացման, ուսումնական պլանների, ծրագրերի մշակման, ներդրման փորձաքննության, ինչպես նաև նյութական, տեխնիկական օժանդակության ցուցաբերմամբ):

Հիմնադրամի բարձրագույն կառավարման մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է՝ բաղկացած 3 անդամներից: Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը:

2 Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:
Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրած հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Դրանք կիրառվել են ներկայացված ժամանակաշրջանի համար, եթե այլ բան նշված չէ:
Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Հիմնադրամի գործառնական արժույթը:
Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Չափման հիմքերը
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիման վրա, բացառությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

Անընդհատության սկզբունք
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների օգտագործում
Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Հիմնադրամի ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Ստորագրումը

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2022 թվականի հունիսի 27-ին Հիմնադրամի տնօրեն Նարինե Մելիքյանի և Հիմնադրամի հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող՝ «Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ-ի անունից գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող լիազոր անձ Հակոբ Վարդանյանի կողմից:

Ֆինանսական գործիքներ
Կազմակերպությունում առկա են հետևյալ ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները.

- Արժեթղթեր (փայեր),
- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Առևտրային կրեդիտորական պարտքեր,
- Փոխառություններ,
- Դրամական միջոցներ:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հիմնական միջոցներ

Սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստը:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Տրանսպորտային միջոցներ	5 տարի
Համակարգչային տեխնիկա	1-5 տարի
Տնտեսական և գրասենյակային գույք	5 տարի:

Ոչ նյութական ակտիվներ

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստը:

Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա:

Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերի գծով ծախսից (եկամտից):

4 Ծառայությունների մատուցումից հասույթ

	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ
Փորձագիտական, խորհրդատվական ծառայություններ մատուցված ՀՀ ռեզիդենտ կազմակերպություններին	2,700	5,550
Փորձագիտական, խորհրդատվական ծառայություններ մատուցված ոչ ռեզիդենտ կազմակերպություններին	-	264
	2,700	**5,814**

5. Մատուցված ծառայությունների ինքնարժեք

	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ
Աշխատակիցների վարձատրություն	1,299	4,282
Սեմինարների կազմակերպման ծախսեր	-	105
Մաշվածության ծախս	-	1,131
Այլ ծախսեր	5	228
	1,304	**5,746**

6. Վարչական ծախսեր

	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ
Աշխատակիցների վարձատրություն	1,000	740
Հաշվապահության վարման ծախսեր	1,250	2,040
Մաշվածության ծախս	1,292	283
Հեռահաղորդակցության ծախսեր	42	2,042
Այլ ծախսեր	378	47
	3,962	**5,152**

7. Շնորհից եկամուտ

	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ
Շնորհից եկամտի ճանաչում (ծնթ. 15)	32,262	6,496
	32,262	**6,496**

8. Ծրագրային ծախսեր

	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ
Աշխատավարձ	25,584	6,084
Վարձակալության ծախսեր	90	-
Հաշվապահական հաշվառման վարում	790	-
Գրասենյակային ծախսեր	127	-
Վառելիք	387	138
Այլ ծախսեր	5,284	274
	32,262	**6,496**

9. Շահութահարկ

	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս	248	-
Հետաձգված հարկի գծով փոխհատուցում	(65)	(73)
Շահութահարկի գծով ծախս//(փոխհատուցում)	**183**	**(73)**

Հաշվետու տարվա համար ՀՀ «Հարկային օրենսգրքի» համաձայն շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2020՝ 18%):

Շահութահարկի համադրումը հետևյալն է.

	2021թ.		2020թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (ՓՄԿ-ների ՖՀՄՍ)	**5,197**		**(564)**	
Շահութահարկ սահմանված դրույքով	935	18%	(102)	18%
Շահութահարկի նպատակով (չհարկվող եկամուտների)/ չնվազեցվող ծախսերի ազդեցությունը, զուտ	(752)	(15%)	29	(5%)
Տարվա հարկային ծախս/եկամուտ և արդյունավետ տոկոսադրույք	**183**	**3%**	**(73)**	**13%**

10. Հիմնական միջոցներ

	Մեքենաներ և սարքավորումներ հազար դրամ	Տրանսպորտային միջոցներ հազար դրամ	Այլ հիմնական միջոցներ հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
Սկզբնական արժեք				
1 հունվարի 2020թ.	607	13,600	28	14,235
Ավելացումներ	-	-	-	-
31 դեկտեմբերի 2020թ.	607	13,600	28	14,235
Ավելացումներ	-	-	--	-
31 դեկտեմբերի 2021թ.	607	13,600	28	14,235
Կուտակված մաշվածություն				
1 հունվարի 2020թ.	(158)	(6,076)	(28)	(6,262)
Տարվա մաշվածություն	(285)	(1,128)	-	(1,413)
31 դեկտեմբերի 2020թ.	(443)	(7,204)	(28)	(7,675)
Տարվա մաշվածություն	(164)	(1,128)	-	(1,292)
31 դեկտեմբերի 2021թ.	(607)	(8,332)	(28)	(8,967)
Զուտ հաշվեկշռային արժեք				
1 հունվարի 2020թ.	449	7,524	-	7,973
31 դեկտեմբերի 2020թ.	164	6,396	-	6,560
31 դեկտեմբերի 2021թ.	-	5,268	-	5,268

11. Ֆինանսական ակտիվներ

	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ
Փայեր	5,330	5,483
	5,330	**5,483**

12. Դրամական միջոցներ

	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ
Բանկային հաշիվներ (դրամային)	34	258
Բանկային հաշիվներ (արտարժութային)	12,406	8,770
	12,440	**9,028**

13. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ
Մատուցված ծառայությունների գծով	360	590
Տրված կանխավճար	-	19
Ստացվելիք դրամաշնորհ	1,768	-
Հարկերի գծով	530	850
	2,658	**1,459**

14. Փոխառություններ

Փոխատու	Մնացորդ առ 31.12.2020	Տրամադրում	Մարում	Մնացորդ առ 31.12.2021
Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ	3,600	-	-	3,600
Ընդամենը	**3,600**	**-**	**-**	**3,600**

Փոխառությունը ստացվել է կապակցված կողմից անտոկոս (ծնթ. 16):

15. Եկամուտներին վերաբերող շնորհներ

	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ
Տարեսկզբի մնացորդ	2,486	-
Շնորհների ստացում	29,501	9,045
Եկամտի ճանաչում (ծնթ. 7)	(32,262)	(6,496)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ	237	(63)
Այլ	38	-
Տարեվերջի մնացորդ	**-**	**2,486**

16. Գործարքներ կապակցված կողմերի հետ

16.1 Գործարքներ

Հիմնադրամին փոխկապակցված կողմ է հանդիսանում «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն, որի բաժնետերը հանդիսանում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը:
Հաշվետու տարում Հիմնադրամը «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ին վարձակալության է տվել ավտոմեքենա 1,440 հազ. դրամ ընդհանուր գումարով: Հաշվետու ժամանակաշրջանի վերջում «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ դեբիտորական պարտքը կազմել է 360 հազ. դրամ:
Հաշվետու տարում հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից ստացվել է նվիրատվություն 7,300 հազար դրամ գումար:

16.2 Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Հիմնադրամի գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար: Հիմնադրամի կառավարչական անձնակազմը՝ գործադիր տնօրենն է:

	2021թ. հազար դրամ	2020թ. հազար դրամ
Աշխատավարձ	8,343	6,600
	8,343	**6,600**

Կապակցված կողմերի հետ հաշվետու տարվա ընթացքում այլ գործարքներ չեն կատարվել:

17. Պայմանական պարտավորություններ

Հիմնադրամը ներգրավված չէ դատական վարույթներում:

18. Գրավադրված ակտիվներ

Հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գրավադրված ակտիվներ չունի:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2022 12:25